

Միքելի՝ համաքաղաքացիներ,

Էջմիածնի քաղաքապետարանը որպես ուղենիշ է ընտրել նպաստել Էջմիածնի համաչափ զարգացմանը և բնակչությանը հուզող խնդիրներին լուծում տալը: 2021 թվականին քաղաքային իշխանությունների համակարգված ու հետևողական գործունեությունը միտված է եղել այս նպատակի իրագործմանը:

Ձեզ ենք ներկայացնում կատարված բարեփոխումների հակիրճ պատկերը:

Հաստատել Էջմիածին համայնքի բյուջեի 2021թ. 4-րդ եռամսյակի կատարման հաշվետվությունը, համաձայն հավելված 1-ի և 2-ի.

ա) Եկամտային մասով 2329659.9 հազ. դրամ,

բ) Ծախսային մասով 2192418.0 հազ. դրամ:

Էջմիածին քաղաքի բյուջեով 2021թ. նախատեսվել են եկամուտներ 2173502.1 հազ. դրամ, նույն թվում դոտացիա հանրապետական բյուջեից 783962.9 հազ. դրամ:

Բյուջեի եկամուտների փաստացի մուտքը կազմել է 2329659.9 հազ. դրամ (107.2%), այդ թվում վարչական բյուջեի սեփական եկամուտներ՝ 118.5%: Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 297433.9 հազ. դրամ:

Էջմիածին քաղաքի բյուջեի 2021թ. տարեկան եկամուտների պլան-կատարողականը, ինչպես նաև 2020թ. տարեկան փաստացի կատարողականը ունի հետևյալ տեսքը.

Ն³/₂. 1⁶Ս

Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2021թ. Պլան տարեկան	2021թ. Կատարող.	2021թ. Կատ. %	2020թ. կատ.	2021/2020 նկատմ.
1	Հարկային եկամուտներ ընդամենը, որից՝	420000,0	527105,5	125,5%	489450,1	107,7%
7-1	Գույքահարկ շինություններից	100000,0	111476,0	111,5%	99503,5	112,0%
7-2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	250000,0	370984,4	148,4%	306947,6	120,9%
9-1	Հողի հարկ	70000,0	44645,1	63,8%	82999,0	53,8%
16	Պետական տուրքեր ընդամենը, որից՝	28000,0	37925,5	135,4%	23707,8	160,0%
16-90	Պետ. տուրք ՔԿԱԳ բաժնից	8000,0	13538,1	169,2%	7612,4	177,8%
16-91	Պետ. տուրք նոտարական գրասենյակից	20000,0	24387,4	121,9%	16095,4	151,5%
45	Տեղական տուրքեր ընդամենը	40476,5	67368,9	166,4%	56118,7	120,0%
45	Օբյեկտները քանդելու աշխ. սկսելու թույլ. համար	180,0	80,6	44,8%	256,4	31,4%
45-5	Օբյեկ. վերակ. արդիակ. տեսքը փոխելու վճար	15,0	5,0	33,3%	15,0	33,3%
45-6	Հիմնական և ոչ հիմնական շին. ներսում ոգելից խմ. վաճ. համար	8724,0	11042,2	126,6%	9875,0	111,8%
45-8	Հիմնական և ոչ հիմնական շին. ներսում ծխախոտի վաճ. համար	8370,0	9065,1	108,3%	8650,4	104,8%
45-10	Գազի բացթյա վաճառքի թույլտվություն	4600,0	4830,0	105,0%	5541,7	87,2%
45-11	Վառելիքաքսայուղերի վաճառքի թույլտվ.	1260,0	4299,4	341,2%	4020,0	107,0%
45-13	Այլ ապրանքների բացթյա վաճ. թույլտվություն	1990,0	3708,4	186,4%		

45-16	Հանրային սննդի կազմակերպ. թույլտվություն 24:00-ից հետո	2216,0	5623,5	253,8%	4137,3	135,9%
45-21	Այլ արտաքին գովազդ	8460,0	19729,2	233,2%	15460,8	127,6%
45-22	Համայնքի արխիվից պատճ. կրկն. համար	100,0	90,2	90,2%	69,0	130,7%
45-23	Մարդատար տաքսու ծառ. թույլտվ. համար	502,5	591,0	117,6%	358,5	164,9%
45-32	Հիմնական շինությունների շինարարութ. թույլտվության համար	1470,0	3383,3	230,2%	2020,0	167,5%
45-35	1001 և ավելի օբյեկտների համար	1639,0	3853,0	235,1%	3976,0	96,9%
45-45	Թանկարժեք մետաղների առուվաճառքի թույլտվ. համար	950,0	1068,0	112,4%	1738,6	61,4%
4	Ոչ հարկային եկամուտներ, որից`	373816,5	389220,8	104,1%	259231,5	150,1%
22-50	Գյուղ. նշան. հողերի վարձավճար	1500,0	1032,2	68,8%	1202,6	85,8%
22-52	Ոչ գյուղ. նշան. հողերի վարձավճար	25000,0	28741,2	115,0%	29971,4	95,9%
22-54	Գույքի վարձակալության վճար	3000,0	8499,8	283,3%	2914,0	291,7%
46	Տեղական վճարներ ընդամենը	325710,5	317229,2	97,4%	186496,2	170,1%
	ա/ բնակ. սպասարկման և աղբի վարձ բնակչությունից	117240,0	134101,8	114,4%	107960,4	124,2%
	բ/ աղբահանության վարձ հիմնարկներից	31356,0	31362,7	100,0%	30793,0	101,9%
	գ/ այլ տեղական վճարներ	2315,0	6398,6	276,4%	4002,0	159,9%
	դ/ մանկապարտեզի ծնող. միջոց	109032,0	80179,3	73,5%	26689,2	300,4%
	ե/ երաժշտ. և գեղ. դպրոցների ուս. վարձ	27767,5	27413,8	98,7%	17051,6	160,8%
	զ/ մարզադպրոց	38000,0	37773,0	99,4%		
28-60	Ինքնակամ շինությունների օրինականացման վճար	12000,0	20231,9	168,6%	20841,3	97,1%
24-50	Վարչական իրավախախտ. դիմաց կիրառ. տույժ. մուտ.	3606,0	4296,7	119,2%	4030,7	106,6%
28-50	Այլ ոչ հարկային եկամուտներ, որից`	3000,0	9189,8	306,3%	13775,3	66,7%
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	862293,0	1021620,7	118,5%	828508,1	123,3%
37-1	Դոտացիա	783962,9	783962,9	100,0%	608278,0	128,9%
37-3	Սուբվենցիա	2288,6	2288,6	100,0%	4900,8	46,7%
37-4	Այլ դոտացիա				87353,5	0,0%
37-5	Այլընտրանքային դրամաշնորներ	1890,0	1890,0	100,0%	2250,0	84,0%
47-1	Պատվիրակված լիազ. իրակ. համար	7227,3	7227,3	100,0%	7473,3	96,7%
37-8	Միջազգային կազմակերպություններից մուտքեր					
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	1657661,8	1816989,5	109,6%	1538763,7	118,1%
29-50	Հողի օտարումից մուտքեր	210000,0	203189,6	96,8%	144741,2	140,4%
29-51	Այլ հիմնական միջոցների օտարումից մուտքեր	11000,0	21528,9	195,7%	17161,2	125,5%
38-4	Միջազգային կազմակերպություններից մուտքեր					

38-1	Պաշտոնական կապիտալ տրանսֆերտներ	294840,3	287951,9	97,7%	2648,7	10871,4%
49-1	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանում	97377,4	97377,4	100,0%	136529,8	71,3%
	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	515840,3	512670,4	99,4%	164551,1	311,6%
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	2173502,1	2329659,9	107,2%	1703314,8	136,8%
	Ն/Թ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	1083293,0	1246339,2	115,1%	990410,5	125,8%

Էջմիածին քաղաքի բյուջեի 2021թ. սեփական եկամուտների գծով նախատեսված 1083293.0 հազ. դրամի դիմաց մուտք է եղել 1246339.2 հազ. դրամ (115.1%):

2021թ. Էջմիածին քաղաքի բյուջեից ծախս է կատարվել 2192418.0 հազ. դրամ:

Ըստ բնագավառների կատարվել են ծախսեր.

1. Քաղաքապետարանի պահպանման ծախսեր 231365.2 հազ. դրամ
2. Կրթության համակարգի ծախսեր- 360150.0 հազ. դրամ
3. Սպորտի համակարգի ծախսեր- 108801.0 հազ. դրամ
4. Մշակույթի համակարգի ծախսեր- 216189.7 հազ. դրամ
5. Բարեկարգման ծախսեր- 294256.4 հազ. դրամ
6. Բնակ. կոմունալ վարչության ծախսեր- 48745.6 հազ. դրամ
7. Սան. մաքրում և աղբահանություն- 264262.3 հազ. դրամ
8. Սոցիալական ֆոնդի ծախսեր- 23437.5 հազ. դրամ
9. Համաքաղաքային միջոցառումների ծախսեր- 11573.5 հազ. դրամ
10. Անասնաբուժական ծառայություն- 990.0 հազ. դրամ
11. Պատվիրակված լիազորությունների ծախսեր- 7097.3 հազ. դրամ
12. Ֆոնդային բյուջեի միջոցներից ծախսվել է- 625549.5 հազ. դրամ

Ծախսային մասում քաղաքապետարանը ուշադրությունը կենտրոնացրել է քաղաքի ասֆալտապատման, սանիտարական մաքրման, լուսավորության աշխատանքներին: Կատարվել են 69636.8 հազ. դրամ փողոցների փոսային նորոգման, 450381,7 հազ. դրամ հիմնանորոգման աշխատանքներ, 47956,0 հազ. դրամ մայրերի հիմնանորոգման աշխատանքներ, 60639,0 հազ. դրամ կոյուղու անցկացման համար: 2021թ. համայնքապետարանի ՀՈԱԿ-ների կողմից մուտք է եղել 145366.1 հազ. դրամ եկամուտ.

նույն թվում

ա/ նախադպրոցական հիմնարկների երեխայի պահպանման վարձ – 80179.3 հազ. դրամ,

բ/ երաժշտական դպրոցների երեխաների ուսման վարձ – 27413.8 հազ. դրամ;

գ/ մարզադպրոցի երեխաների ուսման վարձ – 37773.0:

Տրվել է ՀՈԱԿ-ներին սուբսիդիա – 685140.7 հազ. դրամ:

2021 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Արմավիրի մարզում կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2021 թվականի սեպտեմբերի 24-ի ՀՀ ՀՕ-328-Ն օրենքով կազմավորվեց Վաղարշապատ բազմաբնակավայր համայնքը, որն ընդգրկում է Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրերը: Ըստ այդմ, ներկայացնում ենք նաև Ոսկեհատ բնակավայրի 2021թ. բյուջեի կատարման հաշվերվությունը.

Հաստատել Ոսկեհատ համայնքի բյուջեի 2021թ. 4-րդ եռամսյակի կատարման հաշվետվությունը, համաձայն հավելված 1-ի և 2-ի.

ա) Եկամտային մասով 114270.4 հազ. դրամ,

բ) Ծախսային մասով 82984.9 հազ. դրամ:

Ոսկեհատ համայնքի բյուջեով 2021թ. նախատեսվել են եկամուտներ 106380.2 հազ. դրամ, նույն թվում դոտացիա հանրապետական բյուջեից 65576.5 հազ. դրամ:

Բյուջեի եկամուտների փաստացի մուտքը կազմել է 114270.4 հազ. դրամ (107.4%), այդ թվում վարչական բյուջեի սեփական եկամուտներ՝ 124.3%: Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 57810.7 հազ. դրամ:

Ոսկեհատ համայնքի բյուջեի 2021թ. տարեկան եկամուտների պլան-կատարողականը, ինչպես նաև 2020թ. տարեկան փաստացի կատարողականը ունի հետևյալ տեսքը.

№ 1/2. 1ԻՅՍ

Ծ/Ծ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2021թ. Պլան տարեկան	2021թ. Կատարող.	2021թ. Կատ.%	2020թ. կատ.	2021 /2020 նկատմ.
1	Հարկային եկամուտներ ընդամենը, որից՝	23631,5	24361,7	103,1%	20241,3	120,4%
7-1	Գույքահարկ շինություններից	1415,0	910,6	64,4%	559,5	162,8%
7-2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	13616,5	14842,9	109,0%	11873,7	125,0%
9-1-2	Հողի հարկ	8600,0	8608,2	100,1%	7808,1	110,2%
45	Տեղական տուրքեր ընդամենը	290,0	551,6	190,2%	405,0	136,2%
45-6	Հիմնական և ոչ հիմնական շին. ներսում ոգելից խմ. վաճ. համար	30,0		0,0%	50,0	0,0%
45-10	Հեղուկ վառելիքի և սեղմված գազի վաճառքի թույլ.	200,0	210,0	105,0%	200,0	105,0%
45-32	Հիմնական շինությունների շինարարութ. թույլտվության համար	60,0	341,6	569,3%	155,0	220,4%
4	Ոչ հարկային եկամուտներ, որից՝	3480,0	9151,5	263,0%	999,2	915,9%
22-50	Գյուղ. նշան. հողերի վարձավճար	90,0	128,8	143,1%	110,0	117,1%
46	Տեղական վճարներ ընդամենը	3390,0	1624,0	47,9%	79,8	2035,1%
	ա/ բնակ. սպասարկման և աղբի վարձ բնակչությունից	1790,0	114,0	6,4%	79,8	142,9%
	բ/ մանկապարտեզի ծնող. միջոց	1600,0	1510,0	94,4%		
28-60	Ինքնակամ շինությունների օրինականացման վճար		7398,7		809,4	914,1%

	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՒ ՄԵՓԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	27401,5	34064,8	124,3%	21645,5	157,4%
37-1	Դոտացիա	65576,5	65576,5	100,0%	57654,4	113,7%
37-3	Այլ դոտացիա				1331,6	0,0%
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՒ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	92978,0	99641,3	107,2%	80631,5	123,6%
29-50	Հողի օտարումից մուտքեր		1299,0		1199,5	108,3%
38-1	Պաշտոնական կապիտալ տրանսֆերտ	13402,2	13330,1	99,5%		
	Վարչական բյուջեի տարեսկզբի մնացի տեղափոխում ֆոնդային բյուջե	35958,5	35958,5	100,0%	24570,9	146,3%
	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՒ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	13402,2	14629,1	109,2%	1199,5	1219,6%
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	106380,2	114270,4	107,4%	81831,0	139,6%
	Ն/Թ ՄԵՓԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	27401,5	35363,8	129,1%	22845,0	154,8%

Ոսկեհատ համայնքի բյուջեի 2021թ. սեփական եկամուտների գծով նախատեսված 27401.5 հազ. դրամի դիմաց մուտք է եղել 35363.8 հազ դրամ (129.1%):

2021թ. Ոսկեհատ համայնքի բյուջեից ծախս է կատարվել 82984.9 հազ. դրամ:

Ըստ բնագավառների կատարվել են ծախսեր.

- 13. Համայնքապետարանի պահպանման ծախսեր - 39981.5 հազ. դրամ
- 14. Կրթության համակարգի ծախսեր- 10570.0 հազ. դրամ
- 15. Սշակույթի համակարգի ծախսեր - 6918.9 հազ. դրամ
- 16. Գյուղատնտեսական ծախսեր - 570.4 հազ. դրամ
- 17. Աղբահանություն- 2200.0 հազ. դրամ
- 18. Սոցիալական ֆոնդի ծախսեր- 2340.0 հազ. դրամ
- 19. Համաքաղաքային միջոցառումների ծախսեր- 1494.2 հազ. դրամ
- 20. Ֆոնդային բյուջեի միջոցներից ծախսվել է- 18909.9 հազ. դրամ

2021թ. համայնքապետարանի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից մուտք է եղել 1510.0 հազ. դրամ եկամուտ:

Տրվել է մանկապարտեզ ՀՈԱԿ-ին սուբսիդիա – 10570.0 հազ. դրամ:

Սոցիալական ոլորտ

Անցած մեկ տարում Էջմիածնի քաղաքապետարան է ստացվել 4867 դիմում քաղաքացիներից և 4687 գրություն՝ տարբեր կազմակերպություններից: Քաղաքապետի մոտ ամեն հինգշաբթի անցկացվող ընդունելությանը մասնակցել է 675 բնակիչ:

Սոցիալական տարբեր հարցերով ստացվել է 464 դիմում, արխիվային տեղեկանքի, միջնորդագրի ու այլ հարցերով դիմել է 129 բնակիչ:

335 ընտանիքի հատկացվել է դրամական օգնություն, որից՝

- Բուժման վճար՝ 192 քաղաքացու
- Ուսման վճար՝ 17 քաղաքացու
- Սոցիալական տարբեր հարցերով՝ 126 քաղաքացու:

Բարեկարգում

Էջմիածնի քաղաքապետարանը ձգտում է լուծում տալ այն խնդիրներին, որոնք ամենաշատն են անհանգստացնում համայնքի բնակչությանը: Էջմիածնեցիների կողմից ամենաշատ բարձրացվող խնդիրներից, թերևս, ասֆալտապատումն է:

2019, 2020, 2021 թվականները բեկումնային տարիներ են եղել ասֆալտապատման ոլորտում կատարված աշխատանքների ծավալի առումով: Ասֆալտապատվել են հողապատ փողոցներ, բակեր ու փակուղիներ. շուրջ 50 անուն շենքերի բակերում ու փակուղիներում ասֆալտապատման աշխատանքներին Էջմիածնեցիները վաղուց էին սպասում: Ասֆալտապատված փողոցների ցանկում են Հունան Ավետիսյանը, Կոմիտասը, Գրիգոր Նարեկացին, Այվազովսկին, Թորամանյանը, Վարդան Մամիկոնյանը, Մեխակյանը, Իսի լե Մուլինոն: Արամ Մանուկյան թաղամասում ասֆալտապատ փողոցներ տեսնելն արդեն իրական է. այս ընթացքում թաղամասում ասֆալտապատվել է 3 փողոց:

2019 և 2020 թվականներին այս ոլորտում կատարված հսկայածավալ աշխատանքները ամփոփել ենք նախորդ տարիների հաշվետվություններում: 2021-ին ևս շարունակել ենք բարեկարգել քաղաք:

Փողոցների հիմնանորոգումը չէր համարվի լիարժեք, եթե զուգահեռ չկատարվեին մայթերի սալիկապատման և էսթետիկ միջավայրի ստեղծմանն ուղղված աշխատանքներ: Այս ուղղությամբ ևս տեսանելի աշխատանք է կատարվել:

Եվ այսպես.

2021 թվականին հիմնովին ասֆալտապատվել են՝

- ✓ Հունան Ավետիսյան,
- ✓ Թորոս Ռոսլին (նախկին՝ Լիսիցյան),
- ✓ Վարդան Մամիկոնյան (հատված),
- ✓ Կոմիտաս փողոց (2 հատված),
- ✓ Գրիգոր Նարեկացի,

- ✓ Թորամանյան,
- ✓ Այվազովսկի,
- ✓ Վիկտոր Համբարձումյան (նախկին Լոմոնոսով) 1-ին փակուղին,
- ✓ Արագածի գանգված թիվ 16 շենքի բակը,
- ✓ Ս. Մովսես Խորենացի 0,2, 4, 22, 24, 26 շենքերի բակերը,
- ✓ Շահումյան 69, 71 և 73 շենքերի բակեր

Հիմնանորոգումներին զուգահեռ կատարվել են նաև փոսայցման աշխատանքներ:

Պետություն-համայնք համաֆինանսավորմամբ 2021 թվականի սուրվենցիոն ծրագրով Էջմիածնում կատարվել են հետևյալ աշխատանքները՝

- Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի ասֆալտապատում
- Բաղրամյան փողոցի մայթերի հիմնանորոգում՝ սալիկապատմամբ
- Սբ. Մովսես Խորենացի փողոցի հիմնանորոգում (ջրահեռացման համակարգի կառուցում, ասֆալտապատում)
- Արամ Մանուկյան 2-րդ թաղամասի կոյուղու կառուցում

Նշենք, որ բարեկարգման աշխատանքները չեն սահմանափակվել միայն ասֆալտապատմամբ, զուգահեռ կառուցվել են ջրահեռացման համակարգեր, փոխվել են եզրաքարերը, ավելացվել են թեքահարթակներ: Նոր սալիկապատված փողոցներում տեղադրվել են նաև մայթերի աղբամաններ: Իսկ էլ ավելի հաճելի միջավայր ապահովելու համար 2022-ին նախատեսվում է հիմնանորոգված փողոցը համալրել ծառերով:

Կոյուղի և ջրագիծ

Տարիներ շարունակ Էջմիածին քաղաքում կեցության համար անբարենպաստ պայմաններ են եղել՝ կապված ջրահեռացման և ջրամատակարարման համակարգերի բացակայության հետ: Քաղաքապետարանի ողջ թիմը հանձն է առել վերացնել նմանատիպ խոչընդոտները: Ըստ այդմ՝ 2020-2021 թթ. Արամ Մանուկյան 1-ին և 2-րդ թաղամասերում լուծում է ստացել 20 տարուց ի վեր առկա խնդիրը՝ կառուցվել են կոյուղագծեր:

2021 թվականին լուծում է ստացել երկար ժամանակ քաղաքի առջև ծառայած հետևյալ կենսական նշանակության խնդիրը. Չարենց 2-րդ թաղամասի կառուցումից ի վեր բնակիչները ստիպված էին լինում խմելու ջուրը դույլերով բերել հարակից փողոցներից, քաղաքապետարանի միջոցներով այս թաղամասում հաշվետու տարում վերջապես կառուցվեց խմելու ջրի մատակարարման համակարգ:

Հարգելի՛ համաքաղաքացիներ, 2021 թվականի ընթացքում, ընդլայնելով բարեփոխումների շղթան, ձեռնարկվել են քայլեր, որոնք ուղղված են եղել քաղաքի գիշերային լուսավորման համակարգի բարելավմանը: Արդյուքնում կենտրոնական

փողոցներում սպիտակ գույնի փոխարեն ներդրվել են նեյտրալ գույնի և ավելի որակյալ՝ 100Վտ հզորությամբ լապտերներ, որի շնորհիվ փողոցները հագեցել են երթևեկության համար առավել հարմարավետ լուսավորությամբ: Իսկ այս փողոցների նախկին լեդ լուսատուները օգտագործվել են Անդրանիկ, Արամ Մանուկյան փողոցները, Չարենց 1-ին և 2-րդ թաղամասերը, ինչպես նաև Արագածի 2-րդ զանգվածը ժամանակակից արտաքին լուսավորությամբ ապահովելու համար:

Պատկանյան փողոցում նախկին 13-ի փոխարեն ավելացվել են թվով 50 LED լուսատուներ, ինչը ապահովում է երկկողմանի լուսավորություն:

«LED» լուսատուներով արտաքին լուսավորություն է անցկացվել նաև Զվարթնոց թաղամասի Այվազովսկի փողոցում և փակուղիներում: Քաղաքի տարբեր հատվածներում ու բակերում ավելացվել է շուրջ 150 լուսատու:

Սիրելի՛ համաքաղաքացիներ, մեր նպատակներից մեկն է եղել քաղաքի գրավչությունը մեծացնել ոչ միայն այցելող զբոսաշրջիկների, այլ նաև այստեղ մշտապես բնակվող մարդկանց համար: Նշված ուղղությամբ քայլեր են ձեռնարկվել դեռևս 2019 թվականից, որոնց արդյունքում արտաքին ճարտարապետական լուսավորության համակարգով են համալրվել կենտրոնական հրապարակին հարող շենքերն ու շինությունները, ճիշտ ու գրագետ լուսավորությամբ են ապահովվել Էջմիածնի Կոմիտասի անվան հրապարակին հարող Մայր Աթոռի Վազգենյան Դարպասը, «Վեոն Արմենիա» ՍՊԸ-ին պատկանող շենքը և հրապարակի բազմաբնակարան շենքը: 2021 թվականին արտաքին ճարտարապետական լուսավորությամբ են ապահովվել նաև Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցի և Խորեն Տեր-Հարության թանգարանի շենքերը: Այսպիսով, նոր շունչ և նոր գույներ են հաղորդվել մեր քաղաքի սրտին՝ ընդգծելով քաղաքի դիմագիծը:

2021 թվականին կատարվել են ինչպես հին լուսացույցերի փոխարինման, այնպես էլ նախկինում լուսացույցով չկարգավորվող մի քանի խաչմերուկների՝ լուսացույցերով կահավորման աշխատանքներ:

Երկու խաչմերուկում՝ Վազգեն Առաջին-Սբ. Մ. Մաշտոց և Սբ. Մ. Մաշտոց - Տիգրան Մեծ (նախկին Սպանդարյան), հին լուսացույցերը փոխարինվել են ժամանակակից լեդ, թվատախտակային լուսացույցերով, որոնք հետիոտնին և վարորդին հնարավորություն են տալիս տեսնել, թե քանի վայրկյան է մնացել փողոցը հատելու համար:

Երթևեկության անվտանգության ապահովման և կազմակերպման նկատառումով ևս 3 խաչմերուկ կահավորվել է լուսացույցով: Դրանք են՝

- Սբ. Գրիգոր Լուսավորիչ (նախկին Կամո) – Շահումյան
- Խորենացի-Ալավերդյան
- Իսակով - Տիգրան Մեծ (նախկին Սպանդարյան)

Նշենք, որ Խորենացի-Ալավերդյան և Իսակով-Տիգրան Մեծ (նախկին Սպանդարյան) խաչմերուկներում տեղադրվել են Վազգեն Առաջին-Սբ. Մ. Մաշտոց և Սբ. Մ. Մաշտոց-Տիգրան Մեծ (նախկին Սպանդարյան) փողոցների նախկին լուսացույցերը:

2021 թվականի ընթացքում ձեռք է բերվել և քաղաքի տարբեր հատվածներում տեղադրվել կամ փոխարինվել ընդհանուր թվով 39 մեծ աղբարկղ:

Քաղաքի կենտրոնական հատվածների մայթեզերերում փոխարինվել և/կամ ավելացվել է ընդհանուր թվով 35 հատ փոքր աղբարկղ:

2021 թվականի ընթացքում տրամադրվել է 2930 քառակուսի մետր շինանյութ՝ թվով 22 բազմաբնկարան շենքի տանիքաշինության համար:

Կրթություն և մշակույթ

Մանկապարտեզներ

Ապագա սերունդների առողջ դաստիարակության համար բարեկեցիկ միջավայրի ստեղծումը առաջնահերթ տեղ է գրավում մեր աշխատանքում: Նախադպրոցական կրթության համար ավելի հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով 2019-2021 թվականներին կատարվել են մանկապարտեզների հիմնանորոգման, չշահագործվող մասնաշենքերի նորոգման ու շահագործման, նոր խմբասենյակների բացման ու գույքի թարմացման աշխատանքներ: 2021 թվականին առավել մեծ ուշադրություն է դարձվել մանկապարտեզներ հաճախող երեխաների մտածողության և խոսքի ճիշտ զարգացման ապահովմանը: Ըստ այդմ՝ քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող բոլոր մանկապարտեզները համալրվել են զարգացնող ու կառուցողական խաղերով: Իսկ հաճելի ժամանցը լիարժեք դարձնելու համար նվիրաբերվել են զանազան խաղալիքներ և հեծանիվներ:

2021 թվականին ներդրվել է Էջմիածնի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում առցանց հերթագրման համակարգ: Մանկապարտեզների կառավարման համակարգը ստեղծվել է ինչպես քաղաքացիներին առցանց հերթագրման հնարավորություն ապահովելու, այնպես էլ երեխայի հերթին հետևելու նպատակով: Երեխային առցանց մանկապարտեզ հերթագրելիս համակարգը տրամադրում է ծածկագիր, որով հնարավոր է հետևել դիմումի ընթացքին:

2021 թվականին Էջմիածնի համայնքապետարանի Կրթության և մշակույթի բաժնի ենթակայությամբ գործող ութ մանկապարտեզներում տարվա ընթացքում գործել են 48 խմբեր: Դեկտեմբեր ամսվա տվյալներով մանկապարտեզ է հաճախել 1244 նախադպրոցական տարիքի երեխա: Օգոստոսին կազմակերպվել է ավագ խմբերի երեխաների՝ թվով 352 սանի ավարտական գործընթացը: Երեխաներին համայնքապետարանի կողմից նվիրվել են գրատախտակներ՝ գունավոր մարկերով, մետաղական տառերով:

Տարվա ընթացքում մանկապարտեզները մաքրող միջոցներ, հիգիենայի պարագաներ և գրենական պիտույքներ են ստացել համայնքապետարանի կողմից, ինչպես նաև համավարակի պայմաններում գործելու անհրաժեշտությունով պայմանավորված՝ հեռահար ջերմաչափեր, ախտահանող միջոցներ, բժշկական դիմակներ և ձեռնոցներ:

Տարվա ընթացքում ջեռուցման կամ սննդի մատակարարման խափանման դեպքեր չեն գրանցվել: Բաժնի աշխատակիցների կողմից մշտապես հսկողություն է իրականացվել

աննդի պահպանման և բաշխման, հիգիենայի կանոնների կիրառման, մեթոդական և ընթացիկ աշխատանքների կատարման ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ մանկապարտեզ հաճախող երեխաներից 107-ն օգտվել են վարձավճարի գեղջման արտոնությունից:

Ամանորին ընդառաջ բոլոր երեխաներին համայնքապետարանի կողմից նվիրվել են մանկական դոմինո-խաղեր, իսկ մանկապարտեզները համալրվել են նոր խաղալիքներով:

ԹԻՎ 5 «ԳԱՐՈՒՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 4 տարիքային խումբ:

Մանկապարտեզում անցկացվել են Բանակի օրվա և Մայրությանը նվիրված բաց պարապմունքներ:

Մանկապարտեզում կատարվել են վերանորոգչական աշխատանքներ. պատուհանները փոխվել են եվրոպական արտադրության պատուհաններով: Դահլիճի և մի քանի խմբասենյակների հատակը լամինապատվել է, վերանարոգվել: Ամանորին ընդառաջ՝ մանկապարտեզը ավստրիահայ համայնքի կողմից նվեր է ստացել չորս հեռուստացույց: Մանկապարտեզում կատարվել է սանհանգույցի մասնակի վերանորոգում, նոր լվացարանների և արևային ջրատաքացուցիչների տեղադրում:

ԹԻՎ 6 «ԱՐԵՎԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 7 տարիքային խումբ: Մանկապարտեզում իրականացվել են ջրի խողովակների նորոգման աշխատանքներ, ինչի արդյունքում խմբասենյակներն ապահովվել են հոսող տաք ջրով: Ամռանը ձեռք է բերվել դահլիճի համար վարագույրներ, լողավազաններ՝ բակում ամառային խաղերի համար, փոխվել են խոհանոցի լվացարանները:

Մանկապարտեզում տեղի են ունեցել Բանակի օրվա, Տեառնընդառաջի, Մայրության, Սուրբ Հարության, քաղաքի տոնին նվիրված միջոցառումներ:

ԹԻՎ 10 «ՇՈՒՇԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործել է 5 տարիքային խումբ, սեպտեմբերից՝ 6 խումբ: Մանկապարտեզում տեղի են ունեցել թեմատիկ ցերեկույթներ: Համաճարակային իրավիճակը հաշվի առնելով՝ մանկապարտեզում բացառվել են լայնածավալ մեծ միջոցառումները, սակայն բոլոր տոնական օրերին անդրադարձ է կատարվել պարապմունքների, բաց-դասերի միջոցով: Վերանորոգվել է գոծող խմբերից մեկը, վերանորոգվել և վերաբացվել չգործող մեկ խումբ՝ համալրվելով նոր սաներով: Խմբերի համար ձեռք են բերվել խաղալիքներ, վարագույրներ, կահույք:

ԹԻՎ 11 «ՀԱՍՄԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 4 տարիքային խումբ

Մանկապարտեզում տեղի են ունեցել թեմատիկ ցերեկույթներ՝ Բանակի տոնի, Գիքի տոնի, Մայրության և Սուրբ Ծննդյան տոների առթիվ: Մանկապարտեզում տեղադրվել է արևային ջերմատաքացման համակարգ:

ԹԻՎ 13 «ՕԻՇԵՌՆԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 10 խումբ:

Մանկապարտեզում տեղի են ունեցել Տեառնընդառաջի, Մայրության, Սուրբ Հարության, Համբարձման, Քաղաքի տոնին նվիրված միջոցառումներ, ցերեկույթներ: Մանկապարտեզում շարունակվել են վերանորոգչական աշխատանքները, ինչի արդյունքում չվերավորոգված 2 մասնաշենքերի սանհանգույցներն ու լվացարանները փոխարինվել են նորով: Ձեռք է բերվել գազօջախ, բաք, ջրատաքացուցիչ, ջրի պոմպ, կշեռք, էլեկտրական հովհար, աստիճան, թվային ջերմաչափ, փոխվել են սանհանգույցի ծորակները և լվացարանները: Վերանորոգվել է դահլիճը:

ԹԻՎ 14 «ՁՆԾԱՂԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 7 տարիքային խումբ:

Մանկապարտեզում երեխաները տոնել են Հայոց բանակի կազմավորման, Տեառնընդառաջի, Սուրբ Ծննդյան, Համբարձման տոնին նվիրված միջոցառումներ:

Մանկապարտեզում տեղադրվել են արևային 4 ջրատաքացուցիչներ, փոխվել են հոսանքալարերը, անջատիչները, վարդակները, խողովակները, ծորակները, ձեռք են բերվել երկտեղանոց լվացարաններ, 3 հեռահար ջերմաչափեր, 2 էլեկտրական հովհար, 30մ լինոլեում, ջրի պոմպ, մետաղական աստիճան, շերտավարագույրներ խոհանոցի համար:

ԹԻՎ 15 «ԶՎԱՐԹՆՈՑ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 4 տարիքային խումբ: Մանկապարտեզում տեղադրվել է արևային ջրատաքացուցիչ համակարգ, ինչի շնորհիվ մանկապարտեզի խմբասենյակներն ապահովվել են տաք ջրով: Մանկապարտեզում տեղի են ունեցել թեմատիկ ցերեկույթներ:

ԹԻՎ 16 «ՈՍՏԱՆ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

Գործում է 6 տարիքային խումբ: Մանկապարտեզում տեղի են ունեցել թեմատիկ ցերեկույթներ: Իրականացվել են ջրի խողովակների և սանհանգույցների նորոգման աշխատանքներ, ինչի արդյունքում խմբասենյակներն ապահովվել են հոսող տաք ջրով, փոխվել են լվացարանները:

Համայնքապետարանի ենթակայությամբ գործող թիվ 1 և թիվ 2 երաժշտական դպրոցները, Գեղարվեստի դպրոցը, Հ. Հովհաննիսյանի անվան կենտրոնական գրադարանը, Հ. Հովհաննիսյանի տուն-թանգարանը, Պատմագագազրական թանգարանը և Կոմիտասի անվան մշակույթի պալատը տարվա ընթացքում մաքրող միջոցներ, հիգիենայի

պարագաներ և ախտահանող միջոցներ են ստացել համայնքապետարանից: Ելնելով համաճարակային անվտանգության կանոններից, ՀՈԱԿ-ները զերծ են մնացել լայնածավալ մարդաշատ միջոցառումներից, իսկ դրանց առկայության դեպքում խստիվ պահպանվել են հակահամաճարակային բոլոր կանոնները: Տարվա ընթացքում ՀՈԱԿ-ները գործել են անխափան և անընդմեջ:

Մ. ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2021 թ. դեկտեմբերի տվյալներով՝ դպրոցում սովորում է 325 աշակերտ, վարձավճարի զեղչի արտոնությունից օգտվել են 45 սաներ: Ելնելով կիսամյակային աշխատանքային պլանից՝ տեղի են ունեցել տարեվերջյան հաշվետու համերգներ և թեմատիկ միջոցառումներ: ԿԳՄՍ նախարարության անմիջական օժանդակությամբ «Երևանի Սարգիս Ասլամազյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի հետ համատեղ այցելություններ և համերգներ են կազմակերպվել: Դպրոցի 1-ին հարկը ապահովվել է ջեռուցմամբ, ինչի արդյունքում էլ համալրվել է ևս երկու դասարաններով: Փոխվել է ողջ դպրոցի լուսավորությունը՝ ապահովելով լուսավոր դասարաններ: Համերգային մեծ դահլիճի դաշնամուրների համար ձեռք են բերվել երկու դաշնամուրային աթոռներ: Դպրոցում կազմակերպվել է «Փոքրիկ քայլ» հանրապետական մրցույթ-փառատոնը, որին ակտիվ մասնակցել են երկու երաժշտական դպրոցների և՛ աշխատակիցները, և՛ աշակերտները: Դպրոցի ուսուցիչները Ուսուցչի տոնին ընդառաջ դրամական պարգևատրում են ստացել:

Ս. ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2021 թ. դեկտեմբերի տվյալներով դպրոցում սովորում է 218 աշակերտ: Վարձավճարի զեղչի արտոնությունից օգտվել են 18-ը: Ելնելով կիսամյակային աշխատանքային պլանից՝ տեղի են ունեցել տարեվերջյան հաշվետու համերգներ և թեմատիկ միջոցառումներ: Դպրոցի հիմնադրման 45-ամյակի միջոցառումները համավարակի հետ կապված հետաձգվել են: Փոխվել է դպրոցի մի քանի դասարանների հատակի լիոնելումը, դահլիճի վարագույրները, ձեռք է բերվել դաշնամուրի համար նախատեսված համերգային 2 աթոռ և ևս 10 նոր աշխատանքային աթոռներ, սոլֆեջիոյի դասարանի համար ձեռք է բերվել երաժշտական դինամիկ կրիչով: Դպրոցը համալրվել է նաև ջրի ֆիլտրող սարքով: Պարբերաբար վերանորոգվել է ջեռուցման կաթսան, սանհանգույցը:

Դպրոցի ուսուցիչները Ուսուցչի տոնին ընդառաջ դրամական պարգևատրում են ստացել:

Ե. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ

2021 թ. դեկտեմբերի տվյալներով դպրոցում սովորում է 239 աշակերտ: Վարձավճարների զեղչի արտոնությունից օգտվել են 59 երեխաներ: Դպրոցը համալրվել է նոր գույքով, ջրի ֆիլտրող սարքով: Պարբերաբար վերանորոգվել է ջեռուցման կաթսան, սանհանգույցը:

Դպրոցի ուսուցիչները Ուսուցչի տոնին ընդառաջ դրամական պարգևատրում են ստացել:

ՊԱՏՄԱԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Պատմաագագրական թանգարանը տարվա ընթացքում գործել է անընդմեջ: Թանգարանում հավուր պատշաճի նշվել է «Թանգարանների օր»-ը՝ հյուրընկալելով բազում քաղաքացիների և Ա. Բաբաջանյան համերգասրահի «Ակունք» ազգագրական համույթի: Ա. Բաբաջանյանի համերգասրահի հետ համագործակցության արդյունքում ապրիլի 25-ին թանգարանային որոշ նմուշներ ցուցադրվել են համերգասրահի նախասրահում: Սեպտեմբերի 25-26-ը թանգարանում անց են կացվել «Եվրոպական ժառանգության օրեր»-ը:

Թանգարանն անհատ և խմբակայանին այցելուների ընդհանուր թվով ունեցել է մոտ 5000 այցելու, այդ թվում նաև օտարերկրյա քաղաքացիներ:

Թանգարանում վերանորոգվել է վնասված առաստաղը, պատերը, փոխվել են լույսերը: Թանգարանների օրվա հետ կապված աշխատակիցները ստացել են դրամական պարգևատրում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ

Թանգարանը գործել է անընդմեջ: Վերանորոգվել է թանգարանի պատշգամբի հատվածը, թանգարանի գրական սրահում տեղադրվել է օդորակիչ: Գրական սրահում պարբերաբար կազմակերպվել են ռուսաց լեզվի ուսուցման դասընթացներ ռուսաստանյան «Дом Москвы» կազմակերպության հետ համագործակցության արդյունքում: Թանգարանում հավուր պատշաճի նշվել է «Թանգարանների օր»-ը՝ հյուրընկալելով համաքաղաքացի երեխաներին՝ իրենց երգ ու պարով, ասմունքով: Թանգարանում կազմակերպվել են զոհված զինվորներին նվիրված միջոցառումներ: Հոկտեմբերի 11-ին՝ քաղաքի տոնին նվիրված մշակութային միջոցառումների շարքում թանգարանի բակում բեմադրվել է Ս. Խանգաղյանի և Հ. Մաթևոսյանի պատմվածքների մոտիվներով գրված «Սպիտակ արև» ներկայացումը:

Սեպտեմբերի 26-ին թանգարանը մասնակցել է «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառմանը:

Թանգարանն անհատ և խմբակայանին այցելուների ընդհանուր թվով ունեցել է մոտ 4000 այցելու:

Թանգարանների օրվա առիթով աշխատակիցները ստացել են դրամական պարգևատրում:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Գրադարանը համալրվել է 2947 միավոր գրականությամբ: Ընթերցողների քանակը՝ 3728, ընթերցողական հաճախումների քանակը՝ 28293, գրքատացքը՝ 63758 միավոր: Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ գրադարանը գործել է ոչ ամբողջական ձևաչափով՝ գործել են թիվ 1 տեղամասը՝ կենտրոնական մասնաճյուղը, և թիվ 3 տեղամասը՝ Վահան Թոթովենցի անվան գրադարանը: Գրադարանում կազմակերպվել տարաբնույթ միջոցառումներ, պատրաստվել են հիշարժան տարեթվերի, մշտական և փոփոխվող ցուցահանդեսներ, հանդիպումներ մանկագիրների հետ (Օլգա Դարյան, Հովիկ Մխիթարյան, Էդգար Թաթիկյան, Աննա Ասլանյան), Եվրոպական ժառանգության օրեր նախաձեռնության շրջանակում «Համընդգրկուն ժառանգություն» խորագրով միջոցառումների շարքին միացել է

«Արարատյան ներկապնակը Եվրոպայի սրտում» տեսությամբ՝ նվիրված Գառգուին և Մարտիրոս Մարյանին, կազմակերպվել է «Ճախրանքի թևով» վերտառությամբ բանավեճ-քննարկում:

Մասնակի վերանորոգվել է կենտրոնական գրադարանի ընթերցասրահը, սպասարկման բաժինը, համակարգչային աշխատասենյակը: «Արփինետ» ՄՊԸ-ի հովանավորությամբ գրադարանն ամպային տիրույթում ձեռք է բերել տարածք, որտեղ արդեն իսկ տեղակայված է գրադարանի կայքէջը՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան գրադարանային մասնագիտական ծրագրաշարով: Ընթացքի մեջ են գրադարանային ֆոնդերի և ընթերցողների գրանցման աշխատանքները KOHA գրադարանային ծրագրում: Ձեռք են բերվել մեկ ցուցափեղկ-պահարան, մեկ էլեկտրոնային ջերմաչափ, օդորակիչներ, էլեկտրական հովհար, ջրի ֆիլտրող սարք և 3 համակարգիչ:

Գրադարանում ակտիվ շարունակվում են աշխատանքները գրքային ֆոնդերի ստուգման, քարտարանների և գույքամատյանների հետ համեմատականների անցկացման ուղղությամբ: Շարունակվում են նաև փաստացի առկա գրքային միավորների վերահաշվառման, վերագույքագրման աշխատանքները:

Գրադարանավարի տոնին ընդառաջ՝ հոկտեմբերի 7-ին, աշխատակիցները ստացել են դրամական պարգևատրում:

ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ

Կոմիտասի անվան մշակույթի պալատում խմբակները գործել են անընդմեջ՝ խուսափելով մեծածավալ միջոցառումներից: Մշակույթի պալատը պարբերաբար ընդունել է Երևանի, Վանաձորի և Արտաշատի թատերական հաստատություններին, անհատ անձանց, որոնք հանդես են եկել ներկայացումներով և համերգային ծրագրերով: Վերանորոգվել է ջեռուցման կաթսան, ձեռք են բերվել համակարգիչ՝ տպիչ սարքով, գրասենյակային կահույք, բարձրախոսներ: Տոնական և հիշատակի օրերին կազմակերպվել են համապատասխան միջոցառումներ:

Սպորտ

2021 թվականին կարևոր ձեռնարկներում էր Էջմիածնի թիվ 1 մարզադպրոցի լողավազանի շահագործումը. փետրվար ամսից կարողացել ենք շահագործման հանձնել Էջմիածնի թիվ 1 մարզադպրոցի Տերյան թաղամասի մասնաճյուղի լողավազանը՝ վերացնելով առկա բոլոր թերությունները և որպես մարզիչ ներգրավելով ՀՀ սպորտի վարպետ, ՀՀ լողի հավաքական թիմի մարզչական անձնակազմի անդամ Նարեկ Մարտոյանին: Ընդունելությունը կատարել ենք 3 տարեկանից:

Միրելի՛ համաքաղաքացիներ,

Մեր նպատակը մեկն է՝ քայլ առ քայլ նպաստել մեր՝ այսուհետ Վաղարշապատ համայնքի համաչափ զարգացմանը: Իսկ այդ նպատակին հասնելու համար ձեր հավատը, քաղաքի հանդեպ մեծ սերն ու հոգատարությունը այն կարևորագույն գործոններից են, որոնց

շնորհիվ միասին կառուցել և կառուցելու ենք մեր երազանքների քաղաքը: Ամեն ինչ դեռ
առջևում է: